

7199



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

« 03 » 07 2024թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 110 - 24

Նախաձեռնող՝

«ՎԱՌՄԱՇ» ՍՊԸ

ք. Վանաձոր, Գործարանային փողոց, 15 շենք

Գործունեությունը՝

Իջևան համայնքի Խաչթառակի  
ավազակոպճային խառնուրդի հանքավայրի  
արդյունահանում

Տակուշի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 110 - 24

« 03 » 07 2024թ.

**Տավուշի մարզի Խաշթառակի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «ՎԱՌՄԱՇ» ՍՊԸ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն «Ա» կատեգորիա  
Տեղադրման վայրը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Խաշթառակ բնակավայր

**Ներածական մաս.** Տավուշի մարզի Խաշթառակի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի տեղամասում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ (<Օ-150-Ն) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի «թ» ենթակետի, դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

**Նկարագրական մաս.** Խաշթառակի ավազակոպճային խառնուրդի հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում՝ Իջևան քաղաքից մոտ 8.0 կմ դեպի արևելք, Իջևան-Նոյեմբերյան ավտոմայրուղու հարևանությամբ՝ վերջինից 130 մ հեռավորության վրա: Աղստև գետի ողողահունում: Խաշթառակի ավազակոպճային խառնուրդի հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Իջևանի Իջևան համայնքի Խաշթառակ գյուղի վարչական տարածքում, զբաղեցնում է 0.5075 հա տարածք:

Մոտակա բնակավայրերն են՝ Խաշթառակը, Ակնաղբյուրը և Լուսածորը, որոնցից հայցվող տարածքը գտնվում է համապատասխանաբար՝ 1,4 կմ, 0,7 կմ և 1,2 կմ հեռավորությունների վրա: Տարածքը գտնվում է Աղստև գետի միջին հոսանքի ողողահունում, ավազակոպճային հեռավորությունը գետից կազմում է 10 մ:

Տավուշի մարզի Խաշթառակի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի պաշարները հաստատվել է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի հուլիսի 16-ի թիվ 1179-Ա հրամանով, այն դասվում է վերականգնվողների շարքին (1 միավոր վերականգնման գործակցով) C<sub>1</sub> կարգով: Հաստատված պաշարները հաշվառվել են

շինարարական ավագի (<US ԳՈՍՏ 8736-2014 և խճի (<US ԳՈՍՏ 8267-95) արտադրության համար, իսկ վերականգնվող պաշարների օգտագործումը՝ դրանց համապատասխան լաբորատոր փորձարկումների դրական արդյունքների դեպքում: Նախատեսվում է կազմել հանքավայրի բացահանքի նախագիծը 0.51 հա տարածքում՝ տարեկան 21820 խմ ավազակոպճային զանգվածի արտադրողականությամբ, մարվող պաշար: Ավազային զանգվածի արդյունահանման աշխատանքները նախատեսվում են կատարել աշխատանքի սեզոնային ռեժիմով: Աշխատանքային օրերի քանակը ընդունել 195 օր: Արդյունահանված ավազակոպճային զանգվածը նախատեսվում է տեղափոխել ավտոինքնաթափով՝ 2.0 կմ հեռավորության վրա գոյություն ունեցող ՋՏԿ: Հանքավայրի մարվող պաշարները կազմում են 436.4 հազ.խմ, տարեկան մարվող պաշարներն են՝ 21.82 հազ.խմ, գործողության ժամկետը՝ 20 տարի, հանքավայրի զբաղեցրած տարածքը՝ 5075 քմ:

Տարածքի ծայրակետերի կոորդինատները՝ ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

- 1. Y=8513988.000 X=4535150.000
- 4. Y=8514026.000 X=4535023.000
- 2. Y=8514046.000 X=4535118.000
- 5. Y=8513986.000 X=4535029.000
- 3. Y=8514033.000 X=4535074.000
- 6. Y=8513991.000 X=4535083.000

Համաձայն հաշվետվության տեղեկատվության՝ արդյունահանվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Հայցվող տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքն անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Հետախուզված տարածքում ավազակոպճային խառնուրդի հզորությունը տատանվում է 3.6-4.9 մ սահմաններում՝ կազմելով միջինը 4.3 մ: Խառնուրդում ավազի միջին պարունակությունը 30.5 % է, իսկ կոպճինը՝ 69.5 %: Կոպճն ու ավազը ներկայացված են հղկված ոսպնյակաձև և գնդաձև հատիկներով: Տեղամասի տարածքում ավազակոպճային խառնուրդի կուտակումը հիմնականում առաջանում է գետի գարնանային վարարումների ժամանակ՝ գետի բերվածքների հաշվին, ինչին նպաստում են այստեղ գետահունի լայնացման և գետի հոսքի դանդաղման գործոնները:

Օգտակար հաստաշերտի արդյունահանման ժամանակ նախագծային կորուստները որոշված են ըստ երկու խմբերի՝ ընդհանուր բացահանքային կորուստներ՝ 985 խմ կամ 4.51 % և շահագործողական կորուստներ՝ 130 խմ, 0.6 %: Բացահանքի ծառայման ժամկետն է՝ 20 տարի: Աշխատանքային օրերի քանակը տարում ընդունվում է 195 օր, աշխատանքային հերթափոխի քանակը՝ օրվա մեջ 1, հերթափոխի տևողությունը՝ 8.0 ժամ:

Քանի որ օգտակար հաստաշերտն ունի համարյա հորիզոնական տեղադրում և կայուն հզորություն, հանքաշերտի բացումը կատարվում է բացահանքային դաշտի հյուսիս արևմտյան մասից (ամենացածր նիշը) է ընդլայնական կտրող խրամի անցումով: Առաջին ավտոճանապարհի կարգաբերում՝ 101 մ երկարությամբ, ամենամեծ թեքությունը՝ 0.00%, 6 մ լայնությամբ: Ավտոճանապարհի մակերեսն է՝ 606 քմ: Աշխատանքային հրապարակի կարգաբերում՝ 195 քմ մակերես: Կտրող խրամի երկարությունը 60 մ, լայնությունը՝ հիմքի մասում ընդունված է 2.0 մ, միջին խորությունը՝ 4.2 մ: Կտրող խրամի անցումը կատարվում է 1.0 խմ շերտի տարողությամբ հակառակ բաժով սարքավորված - ՅՈՒՆԵՍԿՈՒ 4321A մակնիշի էքսկավատորով: Հանքավայրի շահագործման ժամանակ ընդունված է ընդլայնական ընթացքաշերտերով միակողանի մշակման համակարգ: Ընդունված մշակման համակարգը

ունի հետևյալ տարրերը՝ աստիճանի բարձրությունը միջինը՝ 4.2 մ, ընթացքաշերտի լայնությունը՝ 8.5 մ, էքսկավատորի աշխատանքի անվտանգ գոտու շառավիղը՝ 18.0 մ, աշխատանքային հրապարակի լայնությունը՝ 23.0 մ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները՝ փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օտեկան 2 անգամ): Խմելու և կենցաղային կարիքների, տեխնիկական ջուրը նախատեսվում է վերցնել Աղստև գետից՝ «Օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո: Բացահանքի մշակված տարածության հարթեցում, բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավոր չափով կանաչապատում թփուտներով, դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման նպատակով, նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը: Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման համար: Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն: Կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր, կեղտաջրերի հավաքում հորատից զուգարանում: Նախատեսվում են աշխատողների սանիտարակենցաղային հարմարություններ՝ հանդերձարան, ցնցուղարան, զուգարան և հանգստի սենյակ՝ համաձայն «Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի:

Նախատեսվող աշխատանքներն իրականացվելու են համաձայն էկոլոգիական ծրագրի՝ բացառելով այդ ընթացքում ջրային հոսքի խոչընդոտումը կամ շեղումը, ջրային ռեսուրսի աղտոտումը, կեղտաջրերի արտանետումը, ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխումը: Բուսական աշխարհի օբյեկտների դրանց աճելավայրերի պահպանությունն ապահովելու նպատակով «Օրենսդրական պահանջներին համապատասխան նախատեսվել են միջոցառումներ 2014թ. թիվ 781-Ն որոշման դրույթների համաձայն: Կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումները ներառում են կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությունը, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը: Բնապահպանական միջոցառումների իրականացման համար տարեկան նախատեսված է 150000 դրամ գումար:

Ռեկուլտիվացման աշխատանքները կանոնակարգվում են «Կառավարության 14.12.2017թ. թիվ 1643-Ն որոշման պահանջների համապատասխան: Բացահանքի մակաբացման ապարները 4704 խմ ծավալով ներկայացված են այլուվիալ առաջացումներով: Մակաբացման ապարները նախատեսվում է պահեստավորել բացահանքի հյուսիսային կողմ վերջնական եզրագծի սահմանից դուրս նրա և ապարատար ավտոճանապարհի միջև եղած տարածքում: Լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 0,65 հա, բարձրությունը 0,9 մ: Վերին հարթակի մակերեսը կազմում է 0,55 հա: Լցակույտառաջացումը կառավարվում է բուլդոզերային եղանականով: Շահագործման ավարտից հետո կատարվում է արտաքին լցակույտի վերին հարթակի հարթեցում բուլդոզերի միջոցով:

Ավազակոպճային խառնուրդի արդյունահանման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝ մթնոլորտային օդի, Աղստև գետի օդի աղտոտման վերահսկման, հողային ծածկույթի պարբերական մշտադիտարկումներ անցրին



մեկ անգամ, վայրի բնության, կենսամիջավայրի /Կարմիր գրքում ընդգրկված էնդեմիկ տեսակների/ տարին մեկ անգամ, աղմուկի և թրթռումների՝ ամսական մեկ անգամ: Ընդերքօգտագործման թույլտվության ժամկետի ավարտից 5 տարի առաջ՝ հանքի փակման ծրագրի կազմման նպատակով ևս նախատեսված են մշտադիտարկումներ: Վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվելու է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, «ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշման համաձայն: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150 հազ.դրամ:

**Պատճառարանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով նախնական գնահատման և փորձաքննության փուլերում Տավուշի մարզի Իջևան համայնքում և Խաշթառակ բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Տավուշի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Փորձաքննության գործընթացում վեր են հանվել հետևյալ հիմնավորումները, որոնք հիմք են հանդիսացել եզրակացության կազմման համար.

**Փորձաքննական հիմնավորումներ**

1. Տավուշի մարզի Խաշթառակի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի արդյունահանման աշխատանքների համար հայցվող տարածքի կոորդինատներով պարփակված տարածքը ներառում է Տավուշի մարզի Իջևան համայնքի Խաշթառակ ու Ակնաղբյուր բնակավայրերի՝ պետական, քաղաքացիների, համայնքային սեփականության գյուղատնտեսական և ջրային նպատակային նշանակությունների հողամասեր:
2. Քանի որ հայցվող տարածքը գտնվում է Աղստև գետի ողողահունում և ընդգրկում է գետի ջրածածկվող տարածքներ, ջրապահպան գոտիներ, ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման տարածքներ, որոնք իրենց բնական վիճակով ենթակա են պահպանման՝ որպես էկոլոգիական համակարգեր, հետևաբար ջրային հողերի օգտագործումը ընդերքօգտագործման նպատակով կարող է բացասական ազդեցություն և բնապահպանական ռիսկեր առաջացնել ջրային համակարգերի, հոսքի ձևավորման գոտիների, ինչպես նաև Աղստև գետի ջրի որակի և քանակի վրա:
3. Հիմք ընդունելով ՀՀ ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 20.01.2005թ. «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և ամօսայրերի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջները՝ Տավուշի մարզի Խաշթառակի ավազակոպճային խառնուրդի



հանքավայրի արդյունահանման աշխատանքների իրականացումը Աղստև գետի ողողահունում հանդիսանում են ոչ նպատակահարմար:

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումները և առաջնորդվելով Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ «ՎԱՌՄԱՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Խաշթառակի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Վարդան Հարությունյան